ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/252

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ մեկ անձ, հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16034-2020 գրությամբ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 21.10.2020թ. թիվ 08.1//27841-2020 գրության հիման վրա, 22.10.2020թ.-ին «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.10.2020թ.-ին:

22.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/252 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2020թ.-ին:

2. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 21.10.2020թ. թիվ 08.1//27841-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կառավարության 2020 թվական սեպտեմբերի 3-ի N 1524-Ն որոշմամբ պայմանավորված՝ նախարարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 22-ին հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով «ՀՀԿԳՄՄՆՀՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով կազմակերպված հականեխիչ /անտիսեպտիկ/ և ախտահանիչ միջոցների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով նախատեսված եզրակացությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հոկտեմբերի 8-ին առաջարկվել է «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները, սակայն դրանք չեն շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կից ներկայացնում եմ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները, վերջինիս հայտը, https://armeps.am/ համակարգի միջոցով ուղարկված շտկման մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ուղարկված շտկման մասին ծանուցումը, ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված և պատասխան գրությունները, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը, դրա տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16034-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ծանուցման հայտնում եմ, որ մենք ներկայացրել ենք այն ապրանքը, որը համապատասխանում է տեխնիկական նկարագրին, ունենք համապատասխան համապատասխանության հավաստագիր՝ տրված ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից: Հավաստագիրը կցվում է:

Բացառություն է կազմում միայն այն, որ չունենք ԱՀ մեթոդական հրահանգը: Այն ստանալու համար կարճ ժամանակամիջոցում կազմակերպել հնարավոր չէր: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի պատրաստի արտադրանքը հատուկ փորձաքննություն անցնի ԵՏՄ-ի երկրներից որևիցե մեկում ՌԴ կամ Բելառուսիա, քանի որ Հայաստանի*

Հանրապետությունը նման լաբորատորիաներ չունի: Այդպես պատասխանեցին Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնից: Ուստի այդ մասով շտկումներ չենք ուղարկել: Հայտն էլ մերժվել է, որի համար մենք չենք էլ բողոքում:

Եղել են դեպքեր, որ շտկումներ չեն ուղարկվել և մեր հայտը մերժել են, բայց դա առիթ չի հանդիսացել մեր դեմ նման գործընթաց սկսելու համար:

Հաշվի առնելով վերընշվածը, խնդրում եմ ավելի ներողամիտ գտնվել որոշում կայացնելիս:»:

4. <u>ՍՑ-LO-2020/252 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 17.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ մեկ անձ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն:

iii. «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ մեկ անձից գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են առաջարկվող ապրանքների ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված օգտագործման մեթոդական համապատասխան հրահանգները և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին գնահատելու նպատակով, և հիմք ընդունելով

Կարգի 67-րդ կետը, որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և դիմել ՀՀ առողջապահության նախարարություն մասնագիտական եզրակացություն ստանալու համար:

Հանձնաժողովի 08.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 8.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարությունից 06.10.2020թ.-ին ստացված թիվ Մ-88004-2020 գրությունը, արձանագրել է, որ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում է նշումն այն մասին, որ ապրանքից պետք է պատրաստվի առնվազն 200 լիտր աշխատանքային լուծույթ, վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ, հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Բացակայում են ազդող նյութի վերաբերյալ տեղեկատվությունը, մատակարարման պահին ապրանքի պիտանելության ժամկետի 2/3-ի առկայության և արտադրական փաթեթավորմամբ նշումները: Անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված օգտագործման մեթոդական համապատասխան հրահանգը:

Նույն արձանագրության 9.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատաս-խանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյանը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 08.10.2020թ.-ին Մասնակցի alcotrading2020@gmail.com էլ. հասցեին է ուղարկել արձանագրված անհամապատաս-խանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում:

Հանձնաժողովի 15.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 10.2 կետի համաձայն՝ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ առողջապահության նախարարության 06.10.2020թ.-ին տրված թիվ Մ-88004-2020 գրության համաձայն՝ ի պատասխան 2020 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թիվ 04//25745-2020

գրության, կից ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանության վերաբերյալ մասնագիտական կարծիքը, համաձայն որի՝ ի պատասխան ԼՔ/06.3/22826-2020 գրության, «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ, հայտվել է, որ՝

1. «Դիասեպտիկ 70, ցողացրիչ» միջոցը որպես ազդող նյութ պարունակում է 70% իզոպրոպիլ սպիրտ և ունի ԱՆ կողմից հաստատված ուղեցույց, ինչը համապատասխանում է պահանջներին,
2. «Սուրֆանիոս» ախտահանիչ միջոցն ունի ԱՆ կողմից հաստատված ուղեցույց, որպես ազդող նյութ պարունակում է դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ - 2,5%, NN-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլպրոպան 1,3-դիամին -5,1%, ինչը համապատասխանում է պահանջներին,
3. «Բիանկո» միջոցի վերաբերյալ ՀՀ ԱՆ կողմից հաստատված ուղեցույցը մեզ համար անհասանելի է, ազդող նյութի վերաբերյալ տեղեկատվությունը տեխնիկական բնութագրի մեջ բացակայում է, մասնագիտական եզրակացությունը կտրամադրվի ԱՆ հրամանի ներկայացման դեպքում:

Միաժամանակ հայտնվել է, որ «0.5 լիտր ծավալով պոլիէթիլենային տարա, որից պատրաստվում է առնվազն 200 լիտր աշխատանքային լուծույթ» պահանջը մասնագիտական բնույթ չի կրում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16034-2020 գրությամբ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 17.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 17.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում է նշումն այն մասին, որ ապրանքից պետք է պատրաստվի առնվազն 200 լիտր աշխաւոանքային լուծույթ, վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ, հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Բացակայում են ազդող նյութի վերաբերյալ տեղեկատվությունը, մատակարարման պահին ապրանքի պիտանելության ժամկետի 2/3-ի առկայության և արտադրական փաթեթավորմամբ նշումները: Անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված օգտագործման մեթոդական համապատասխան հրահանգը: Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել

Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ առոջապահության նախարարության 06.10.2020թ.-ին տրված թիվ Մ-88004-2020 գրության համաձայն՝ ի պատասխան 2020 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թիվ 04//25745-2020 գրության, կից ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանության վերաբերյալ մասնագիտական կարծիքը, համաձայն որի՝ ի պատասխան ԼՔ/06.3/22826-2020 գրության, «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ, հայտվել է, որ՝

1. «Դիասեպտիկ 70, ցողացրիչ» միջոցը որպես ազդող նյութ պարունակում է 70% իզոպրոպիլ սպիրտ և ունի ԱՆ կողմից հաստատված ուղեցույց, ինչը համապատասխանում է պահանջներին,
2. «Սուրֆանիոս» ախտահանիչ միջոցն ունի ԱՆ կողմից հաստատված ուղեցույց, որպես ազդող նյութ պարունակում է դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ - 2,5%, NN-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլպրոպան 1,3-դիամին -5,1%, ինչը համապատասխանում է պահանջներին,
3. «Բիանկո» միջոցի վերաբերյալ ՀՀ ԱՆ կողմից հաստատված ուղեցույցը մեզ համար անհասանելի է, ազդող նյութի վերաբերյալ տեղակատվությունը տեխնիկական բնութագրի մեջ բացակայում է, մասնագիտական եզրակացությունը կտրամադրվի ԱՆ հրամանի ներկայացման դեպքում:

Միաժամանակ հայտնվել է, որ «0.5 լիտր ծավալով պոլիէթիլենային տարա, որից պատրաստվում է առնվազն 200 լիտր աշխատանքային լուծույթ» պահանջը մասնագիտական բնույթ չի կրում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի

իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են

վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ հրատապ մեկ անձից գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16034-2020 գրությամբ «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/252 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**